ծանման հետ կոտորեց Սպերի Հայութիւնը, բայց անտառների եւ այրերի մէջ ապաստանած Հայերից շատերը վերադարձան եւ վերաշինեցին իրենց գեղերը: Հարիւր տարի առաջ Իսլամ ընդունած սեպուհները, Բէյ դարձած իրենց հասոյթն ապահովելու համար, այդ ճորտերին հովանաւորեցին եւ վերաշինեցին-չէնացրին աւերակները: Նոյն իսկ 1700ին մօտերը Սպերում 150 հայ գեղեր կային եւ այնպէս էին աճում, որ եթէ 1723ին Արիֆ-Ահմէդ Փաշան նորից կոտորել չտար, այժմ 200—300 գեղ կը լինէր, բայց 1723ին Հայ գեղերի թիւը հասաւ 24-ի եւ այդ թիւը չմեծացաւ մինչեւ սոյն քսանեւորդ դարը եւ վերջին կոտորածները: 1723ին Արիֆ-Ահմէդ Փաշան բռնի խլամացրեց Համշէնի մի մասը, որոնք մինչեւ այսօր հայերէն են խօսում:

1915ին կոտորեցին եւ հեռացրին դաւառից Էգիձոր, Գեղաձոր, Դշաձոր, Դիցանց, Խաչադրիւր, Ծաղկոց, Կողունց, Ձկնաչուր, Մաշկենց, Մանց, Մացրիկ, Ցիշեն, Հոդունց, Հնուտ, Նուխուշէն, Նորքաղաք, Նուշնոտ, Շարիստանց, Ձիպոտ, Ջուրընկեց, Վարիզնոց գեղերը, Սպեր գասապա, Քրեօզ եւ Օձուտ: